թյունն ու Վատիկանի ներկայացուցիչները և Պարսից արքունիքը։

Ահա թե ինչու մոլեռանդ մոլլաները, եվրոպական վաճառականները, դեսպանները և նրանց կողմից գրգռված ամբոխը շահից պահանջում էին չընդունել և շտապ ետ վերադարձնել Օրու դեսպանությունը։

Փարիզ ու Հռոմ են հասնում ֆրանսիական դեսպանի, կաթոլիկ պրոպագանդիստների և հիզվիտների զեկույցներն ու բողոքները։ Հռոմի պապն անմիջապես նամակ է գրում պարսից Հուսեյին շահին և ետ վերցնում Օրուն ուղած իր երաշխավորությունները, հրաժարվում բարձր դնահատականներից, փորձելով նրան ներկայացնել որպես Պարսկաստանի համար վտանգավոր մի անձնավորություն։

Բայց ոչինչ այլևս չէր կարող շտկել գրությունը. Օրու միսիան հասել էր իր նպատակին։ Հռոմի պապը տանուլ էր տվել։ Հուսեյինի արքունիքն ստիպված էր Օրուն ընդունել և այն էլ ավելի մեծ հանդիսավորությամբ, հենց այն պատճառով, որ նա ներկայացնում էր Շվեդիային հաղթող Ռուսաստանը, որից շահը վախենում էր ավելի, քան Եվրոպայից։ Այս բոլորը ցույց են տալիս Օրու քաղաքական հեռատեսությունն ու յայնախոհությունը։

Բայց Օրու գործունեության արժանիքները չէ, որ փնտրում է Քյուրտյանը. նա միայն սեացնում է պայծառ գործչին։

Իսրայել Օրին հայ ազատագրական շարժման ամենափայլուն դեմքերից մեկն է։ Նա իր ողջ կյանքը նվիրաբերեց իր ժողովրդի ազատագրության գործին, դարձավ նրա երազանքների լավագույն թարգմանն ու արտահայտիչը, ժամանակակիցների մեջ բորբոքեց հայրենասիրության կրակը, ջանք չխնայեց ամրապնդելու հայ-վրացական համագործակցությունը Ռուսաստանի հետ, իր գործունեությամբ ավելի ակնբախ դարձնելով Անդրկովկասի ժողովուրդների ռուսական կողմնորոշման նշանակությունը և հեռանկարները։

Ահա թե ինչու Օրու քաղաքական հակառակորդները և նրանց հետագա ու ժամանակակից կուսակիցները միշտ ձգտել են և այժմ էլ փորձում են վարկաբեկել նրան։ Պատահական չէ, որ այժմ, երբ մեր գիտական հասարակայնությունը պատրաստվում է նշել Իսրայել Օրու ծննդյան 300 տարին, դաշնակցական մամուլը փորձում է Իսրայել Օրուն ներկայացնել որպես մի բախտախնդիր ու խարեբա, աշխատում է ամեն կերպ վարկաբեկել նրան։

Հ. Քյուրտյանը իր ներկա հոդվածաշարքով տուրք է տալիս դաշնակ գրչակներին և ջուր լցնում նրանց ջրաղացին։

Վ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հատոր Բ, մասն Ա, Երևան, Հայպետհրատ, 1957։

Մեծանուն ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի ներկա աշխատությունը նրա «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» շարքի երկրորդ հատորն է (առաջին հատորը լույս է տեսել 1948 թվականին, իսկ երրորդը՝ 1951 թվականին)։ Սակայն այս հատորը լրիվ չի ծածկում առաջին և երրորդ հատորների միջև եղած բացը, այլ ընդգրկում է միայն նրա մի մասը։ Գրքի վերջում խմբագրության թողած ծանոթությունից ցավով իմանում ենք, որ հանգուցյալ ակադեմիկոսը երկրորդ հատորի երկրորդ մասի համար ևս հավաքած է եղել նյութեր, սակայն հեղինակի մահվան պատճառով հնարավոր չի եղել ամփոփել և այդ արժեքավոր գործն այդպես էլ մնացել է թերավարտ։

Բազմավաստակ ակադեմիկոսի գրախոսվող հատորն ընդգրկում է հայ Արշակունիների շրջանը, այսինքն՝ Տրդատ առաջինից մինչև Արշակունիների թագավորության վերացումը Արևելյան Հայաստանում (մեր թվականության 66—428 թթ.)։

Նշված ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության ամենից մութ և չպարզաբանված շրջաններից մեկն է. այդպես են առանձնապես առաջին, երկրորդ և երրորդ դարերը՝ մինչև Տրդատ III-ը։ Դրա պատճառը սկզբնաղբյուրների անչափ աղքատությունն է. հունա-հռոմեական աղբյուրները միջանկյալ տեղեկություններ են պահել Հայաստանի մասին, իսկ հայկական պատմիչները, որոնցից հնագույնները IV—V դարերից են, առանձին ուշադրություն չեն դարձրել նախորդ դարերի վրա։ Բացի այդ, հայկական հին աղբյուրները, ինչպես պարզված է, քրիստոնյա խմբագրերի կողմից որոշ փոփոխություններ են ենթարկվել VII—VIII դարերում։ Հայ հեթանոսության մասին որոշ տեղեկություններ և վաղ քրիստոնեական շրջանին վերաբերող շատ փաստեր գունազարդ-

վել և կրճատվել են։ Սկզբնաղբյուրներն իրենց մեջ ընդունել են առասպելական բազմաթիվ տարրեր։ Այդ առանձնապես նկատելի է Ագաթանգեղոսի, Ջ՝նոր Գլակի, Փավստոսի և մասամբ Խորենացու աշխատությունների մեջ։ Այդ է պատճառը, որ սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկությունները դժվար են ենթարկվում գիտական ընդհանրացման, և մենք մինչև այժմ չունենք այս շրջանի քաղաքական պատմության թեկ չատ ճշգրտված ժամանակագրությունը։

Ակադեմիկոս Մանանդյանը, իրեն հատուկ բարեխղճությամբ, հսկայական աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության այս հատվածը մշակելու ուղղությամբ։ Նա մեզ հասած հունական և հին հայկական աղբյուրների տեղեկություններն ի մի բերելով և միաժամանակ քննության առնելով այս կամ այն հարցի վերաբերյալ տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն) եղած հայագիտական գրականությունը, կարողացել է լուծել բազմաթիվ կնճռոտ հարցեր։

Թվարկել ակադ. Մանանդյանի ներկա հատորում լուծված բոլոր հարցերը մի գրախոսականում, հնարավոր չէ. կասենք միայն, որ հատորի սկզբի յոթ գլուխները՝ «Տրդատ Ա-ն և նրա հաջորդները» (էջ 5—20), «Տրդատոսի Հայկական և Պարթևական արշավանքները և ապստամբությունները հռոմայեցիների դեմ» (էջ 21—32), «Վաղարշ Ա, Սոհեմոս, Բակուր և Հռոմեա-պարթևական պատերազմը Մարկոս Ավրելիոսի ժամանակ» (էջ 33—49), «Հայաստանը Սեպտիմիոս Սևերոսի և Անտոնինոս Կարակալլայի արշավանքների ժամանակ» (էջ 50—62), «Սասանյան Պարսկաստանը և Հայաստանի համար ստեղծված նոր կացությունը» (էջ 62—72), «Տրդատ Բ-ը և նրա մասնակցությունը հռոմեական-սասանյան կռիվներին» (էջ 73—90) և «Հայաստանի քաղաքական դրությունը Տրդատ Բ-ից հետո մինչև Տրդատ Գ-ի գահակալությունը» (էջ 91—115)— բազմավաստակ ակադեմիկոսի ջանքերով լուծված առեղծվածների մի ամբողջ շարք է։ Անվիճելի է, որ այս ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության գիտական մշակման համար մենք պարտական ենք հանգուցյալ ակադեմիկոսին. նրան է պատկանում I—III դարերի հայ ժողովրդի քաղաքական պատմության գիտական ժամանակագրությունն կազմելու պատիվը։ Բոլորովին նոր և համոզեցուցիչ ձևով են լուսաբանված Սանատրուկի, Աշխադարի, Սոհեմոսի, Վաղարշ Բ-ի և Արտավազդ Ե-ի գահակալության տարիներին տեղի ունեցող պատմական իրադարձությունները։

Ակադ. Հ. Մանանդյանը այս հարցերը լուծելիս լությամբ չի անցնում նախորդ հայագետների՝ Ինճիճյանի, Սանդալջյանի, Խալաթյանցի, Ադոնցի, Մարկվարտի, Լեոյի և ուրիշների կատարած աշխատանքի կողքով, այլ նշում է այս կամ այն հարցի վերաբերյալ եղած տեսակետները, մեջբերումներ է անում սկզբնաղբյուրներից և ապա հայտնում իր հիմնավորված կարծիքը։ Ըստ որում, հունական և լատինական աղբյուրները նա մեջ է բերում հայերեն թարգմանությամբ, իսկ դարաբար աղբյուրները օգտագործելիս բերում է և՛ բնագիրը, և՛ թարգմանությունը՝ հնարավորություն տալով մասնագետներին ծանոթանալու դրաբար այս կամ այն անհասկանալի դարձվածքի իր վերծանության հետ։

Մանանդյանի աշխատության ամենից գնահատելի կողմը՝ առաջ քաշված հարցերի ինքնատիպությունն է։ Հ. Մանանդյանը չի պատկանում պատմաբանների այն շարքին, որոնք անվերապահորեն կրկնում են իրենց նախորդներին. նա ամեն մի հարց քննելիս, աշխատում է բազմակողմանի մոտեցում ցուցաբերել և, հնարավորին չափ սպառիչ պատասխան տալ նրան։ Նույնիսկ այն դեպքերում, երբ չի կարելի համաձայնել հեղինակի հետ, դարձյալ նրա առաջ քաշած հարցը նոր մտածումի, նոր պրպտումի առիթ է տալիս։ Այդ տեսանկյունով ներկա աշխատությունը մեզ համար ուսանելի է ո՛չ միայն որպես հայ ժողովրդի պատմության դասընթաց, այլև գիտական հետազոտության օրինակելի մի ձեռնարկ, որից սովորելու շատ բան ունեն մեր պատմաբանները։

Ներկա աշխատությունը ուշադրավ է մի այլ տեսակետից ևս. հեղինակը հայ ժողովրդի պատմությունը չի կտրել իր հարևան ժողովուրդների պատմությունից, ինչպես վարվում են որոշ սահմանափակ պատմաբաններ, այլ այն շարադրել է հարևան ժողովուրդների պատմությունը սերտորեն առնչված։ Մերձավոր Արևելքի պատմության լայն ֆոնի վրա։ Հեղինակը ցույց է տվել, որ Հայաստանը գտնվելով Հռոմի և Պարսկաստանի մրցակցության ցանցում, արտաքին քաղաքականության հարցերում միշտ չէ, որ ի վիճակի է գտնվել ինքնուրույն լինելու, նա հաճախ հարկադրված է եղել կատարել ուրիշի պարտադրանքը, հաշվի առնել ստեղծված ընդհանուր քաղաքական իրադրությունը և այլն։ Ուստի առանց հարևան ժողովուրդների կյանքում տեղի ունեցող իրադարձություններին մոտիկից ծանոթանալու, առանց ընդհանուր քաղաքական իրադրությունը հաշվի առնելու, անկարելի է հասկանալ հայ իրականության պատ-

մական շատ իրադարձություններ։ Ահա այս հանգամանքը հաշվի առնելով, հեղինակը, իրավացիորեն Հայաստանում տեղի ունեցող ամեն մի իրադարձության մասին խոսելուց առաջ, նախ կանգ է առնում տվյալ շրջանում ստեղծված ընդհանուր իրադրության վրա, և ապա այդ տեսադաշտի վրա գծում նաև Հայաստանում տեղի ունեցող դեպքերը։

Ուշադրության արժանի է ակադ. Մանանդյանի մոտեցումն իր օգտագործած աղբյուրներին։ Նա ոչ մի աղբյուր չի օգտագործում, մինչև որ անաչառ քննությամբ չի պարզում նրա արժանահավատությունը։ Այդ նպատակով նա ի մի է բերում միևնույն հարցի մասին տարբեր սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները, համեմատում է դրանք իրար հետ, ուսումնասիրում, և նոր միայն հանում իր եզրակացությունը։

Վերին աստիճանի հետաքրքրական են նրա հետևությունները հայկական պատմիչների մասին։ Նա բազմաթիվ անգամ քննության բովից անցկացնելով հայկական պատմիչների՝ Փավստոսի, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և մյուս պատմիչների տեղեկությունները, գալիս է այն եզրակացության, որ դրանց մեծ մասը պատմական ճշմարտացի տեղեկություններ են և միայն տեղ-տեղ խառնված են առասպելների հետ։ Չխոսելով Ղազար Փարպեցու մասին, որի նկատմամբ բացառիկ վստահություն ունի Մանանդյանը՝ որպես պատմական աղբյուրի, մենք ցանկանում ենք բերել նրա կարծիքը երկու հայ պատմիչների՝ Խորենացու և Փավստոսի մասին։ Խորենացու տեղեկությունը Գառնիի հունարեն արձանագրության մասին Հ. Մանանդյանը արժանահավատ է համարում այն աստիճանի, որ կարծում է, թե «Պատմահայրն ինքն անձամբ եղել է Գառնիում և տեսել ու կարդացել է հունարեն արձանագրությունը» (էջ 134)։ Համեմատության մեջ դնելով Փավստոսի տեղեկությունները IV դարի լատին պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսի տեղեկությունների հետ, որը ժամանակակից և ականատես է իր նկարագրած դեպքերի զգալի մասին, գտնում է, որ Փավստոսի տեղեկությունները մեծամասնությամբ համընկնում են Ամմիանոսի հաղորդած տեղեկությունների հետ և պատմական են։

Ցավալի է սակայն, որ հայ պատմիչների տեղեկությունների անաչառ քննության հիման վրա նրանց մասին նման բարձր կարծիք ստեղծած բազմավաստակ ակադեմիկոսը հնարավորություն չունեցավ վերանայելու տարիներ առաջ իր հայտնած մտքերը Խորենացու ժամանակի և արժանահավատության, Կորյունի տեքստի նախնական բնագիր հանդիսանալու, «Աշխարհացույց»-ի հեղինակի և աղբյուրագիտական այլ հարցերի նկատմամբ, որոնք այժմ լուծված են բավարար ձևով։ Այսպես, պարզված է, որ Խորենացին հանդիսանում է ո՛չ թե իններորդ, այլ հինգերորդ դարի հեղինակ։ Անվիճելիորեն ապացուցված է, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը ոչ թե Խորենացին է, այլ յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին։ Պարզված է նաև, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը նախնական բնագիրն է։ Հաստատված է, որ Ագաթանգեղոսի Պատմությունը ուշ շրջանի խմբագրական կնիք ունենալով հանդերձ, մնում է որպես հնագույն սկզբնաղբյուր՝ Անդրկովկասում վաղ քրիստոնեության տարածման մասին և այլն։

Ակադ. Մանանդյանի ներկա աշխատության մեջ քննված ամենակարևոր հարցերից մեկը սոցիալ-տնտեսական հարաբերություններն են, որին նվիրված է չորս գլուխ՝ «Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Արշակունյաց Հայաստանում» (էջ 314—334), «Ազատները, «ոստանիկ»-ները և եկեղեցականները» (էջ 335—353), «Ռամիկ»-ները և «շինականներ»-ները» (էջ 354—385) և «Առևտուրը, քաղաքները, արհեստավորները և սորուկները» (էջ 386—410)։ Նշված գլուխները հիմնականում ներկայացնում են ամփոփումը հեղինակի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության, որը լույս է տեսել Երևանում 1934 թվականին։

Ակադ. Մանանդյանը Արշակունիների շրջանում իշխող սոցիալ-տնտեսական հարաբերությունները իրավացիորեն համարում է ֆեոդալական հարաբերություններ. «Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է մեզ հին հայ աղբյուրների հաղորդած տեղեկություններից,— գրում է նա,— Հայաստանում զարգացել և վերջնականապես ձևակերպվել էր նախարարական կամ ֆեոդալական կազմակերպությունը» (էջ 314)։ Ըստ որում, նշվում է, որ Հայաստանում արտադրության ֆեոդալական եղանակի հիմքը կազմել է նատուրալ տնտեսությունը. գյուղացին ունեցել է արտադրության սեփական միջոցներ և նրա կախումը ֆեոդալից կրել է արտատնտեսական բնույթ։

Խոսելով ֆեոդալական հողատիրության մասին, ակադ. Մանանդյանը մատնացույց է արել կալվածատիրության երեք խոշոր տեսակներ՝ արքունական, եկեղեցական և նախարարական։ Մանր ազնվականները ևս ունեցել են փոքր կալվածներ, սակայն նրանք օգտվել են պայմանական հողատիրության իրավունքից։ Պայմանական այդ հողակտորները կոչվել են խոստակներ, որոնք, հեղինակի կարծիքով, համա-

պատասխանում են եվրոպական ֆեոդին կամ լենին։

Աղբյուրների տեղեկությունների և առանձին տերմինների ստուգաբանության հիման վրա, մեծանուն գիտնականը հանգամանորեն խոսում է ավատական աստիճանակարգության մասին, աստիճանակարգություն, որի գլխին, որպես սուվերեն տեր, կանգնած է եղել թագավորը կամ արքան։ Թագավորի ժառանգական կալվածքն է հանդիսացել Այրարատյան նահանգը, որը կոչվել է ոստան։ Այստեղ են գտնվել թագավորի ազգակից ազնվականները՝ «ոստանիկ»-ները։ Թագավորից անմիջական կախման մեջ են գտնվել Հայաստանի կողմնակալ չորս բդեշխները և գավառատեր խոշոր նախարարները։ Նրանք համարվել են թագավորի անմիջական վասալները և պարտավոր են եղել մուծել պետական սահմանված հարկն ու պատերազմի ժամանակ ներկայանալ թագավորին իրենց զորամասերով։ Բդեշխներից և գավառատեր նախարարներից վասալական կախման մեջ են գտնվել մանր ազնվականները, նրանց ազգակից սեպուհները։ Ֆեոդալական այս բոլոր դասերը միասին վերցրած կազմել են հասարակության իշխող դասակարգը՝ ազատանին։

Արտոնյալ դասակարգի մեջ են դասվել նաև հոգևորականները, որոնք աշխարհիկ իշխանության նմանությամբ կազմել են իրենց հիերարխիկ աստիճանակարգությունը։

Ակադեմիկոս Մանանդյանն ավելի հանգամանորե՛ն կանգ է առել շահագործվող դասակարգի՝ շինականների (գյուղացիության) և բազարային ռամիկների վրա, որոնց ուսերին է ծանրացած եղել շահագործման լուծը։ Նրանք պարտավոր են եղել իրենց ֆեոդալներին վճարել հողային ռենտա և պետական հարկ։ Ակադ. Մանանդյանի կարծիքով, Արշակունյաց շրջանում տարբեր ռենտաներից տիրապետող է հանդիսացել բնավճար ռենտան։

Շինականներին ու ռամիկներին նվիրված գլխում ակադ. Մանանդյանը բնություն է առել նաև ճորտության հարցը։ Համեմատության մեջ դնելով Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում միջին դարերում գոյություն ունեցող ֆեոդալական կախվածության երկու ձևերը (Երբ մի դեպքում ֆեոդալն ինքն է վարում իր կալվածքը հողին ամրացված ճորտ գյուղացիների միջոցով և տնտեսությունից ստացած արդյունքը շուկա է հանում, իսկ մյուս դեպքում ֆեոդալը չի զբաղվում տնտեսությամբ, այլ նրանից կախված գյուղացին իր անասուններով ու գործիքներով մշակում է հողը և ստացած արդյունքից որոշ բանակով բնամթերք վճարում իր տիրոջը)։ Մանանդյանը գտնում է, որ այս երկու ձևերից Հայաստանում իշխող է հանդիսացել երկրորդը։

Մանանդյանը գյուղացիության մասին խոսելիս, խոշոր տեղ է հատկացրել գյուղական համայնքներին։ Նա նշում է, որ համայնքները հողը բաժանում են ըստ շնչերի և ամբողջ համայնքով կատարում իրենց ֆեոդալական հարկային և ռենտային պարտավորությունը։

Ակադ. Մանանդյանի տեսակետը ֆեոդալիզմի մասին ընդունված է հայագիտության մեջ։ Սակայն մենք ուզում ենք առարկել մեծանուն ակադեմիկոսին՝ նախաարշակունյաց Հայաստանում իշխող արտադրության եղանակի հարցի կապակցությամբ։ Նրա կարծիքով, ֆեոդալական հարաբերություններն իշխող արտադրական հարաբերություններ են հանդիսացել նաև Արտաշեսյան հարստության շրջանում. «Հին Հայաստանում,— գրում է նա,— ինչպես և արևելյան մյուս երկրներում, ստրկությունը բնավ չի խաղացել այն դերը, որ նրան սխալմամբ վերագրել է Բորյանը։ Միանգամայն պարզ է, որ նախարարական Հայաստանի տնտեսական հիմքը կիսազատ «շինականն» էր և ոչ ստրուկը, որի տնտեսական դերը պետք է համարել երկրորդական։

Ստրկությունը հին Հայաստանում չի կարող, անշուշտ, համեմատվել իր ծավալով և իր տնտեսական նշանակությամբ Հին Հունաստանի կամ Հռոմի ստրկության հետ, ուր ստրուկները կազմում էին բնակչության ստվար մեծամասնությունը և գլխավոր արտադրող տարրն էին ոչ միայն արդյունագործության մեջ, այլև գյուղատնտեսության» (էջ 410)։

Անտեղի կլիներ, իհարկե, հին Հայաստանում փնտրել կլասիկ ստրկություն, ինչպիսին եղել է Հին Հռոմում և Հունաստանում։ Սակայն, որքան մեզ հայտնի է, Հայաստանում ստրկության հարցը չի դիտվել նման ձևով. ընդունվում էին ստրկատիրություն՝ արևելյան, հելլենիստական գունավորումով, որի էությունն այն է, որ արտադրության տիրապետող ստրկատիրական եղանակի կողքին որոշակի տեղ են ունեցել նաև նախնադարյան համայնական հասարակության և նոր ծնվող ֆեոդալական հասարակության կացութաձևերը՝ իրենց ուժեղ դրսևորումով։ Մենք ևս բաժանում ենք այս տեսակետը և գտնում ենք, որ հարյուր-հազարների հասնող ռազմագերիների Հայաստան բերելը, նրանց օգտագործելը «դաստակերտ»-ներում և «ձեռնակերտ»-ներում, Հայաստանի տնտեսական կյանքի ընդգրկումը հելլենիստական շրջապտույտի մեջ, հին Հայաստանի բազաքների բնույթը, հելլենիստական իշխող կուլտուրան և այլն, խոսում են հօգուտ արևելյան ստրկա-

տիրության գոյության։ Համենայն դեպս, մեր ձեռքի տակ գտնվող փաստերն ավելի վկայում են սարկության մասին, քան ֆեոդալիզմի։ Մենք ճիշտ չենք համարում այն հայագետների պրնդումները, որոնք միջնադարյան հայկական պատմիչների կանոնագրքերի հիման վրա անալոգիաներ կատարելով փորձում են վերականգնել հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Նման մոտեցումը ճիշտ չէ, որովհետև հին հայկական պատմիչները, որոնք ապրել են ֆեոդալական հարաբերությունների շրջանում, նախորդ էտապի մասին խոսելիս իրենց ժամանակի հարաբերությունները մեքենայորեն փոխադրում են այնտեղ։

Ակադ. Մանանդյանը ներկա հատորում, IV դարի Հայաստանի ներքին կյանքը լուսաբանելիս, կանգ է առել Հայաստանում վաղ ֆեոդալիզմի շրջանում տեղի ունեցած սոցիալական մի կարևոր իրադարձության՝ Արշակավանի ելույթի վրա, որը պատշաճ ուշադրության չի արժանացել նախորդ ուսումնասիրողների կողմից։ Խորենացին, ինչպես և Փավստոսը, ինչպես հայտնի է, Արշակավանի ապստամբությունը ներկայացրել են որպես գողերի և ավազակների ելույթ։ Արշակը, իբրև թե հրովարտակ է գրել և Արշակավան հրավիրել ամեն կարգի գողերի ու ավազակների, որոնք հավաքվելով Արշակավանում, ապստամբել են։ Ակադ. Մանանդյանը գտնում է, որ Արշակավան հավաքված տասնյակ հազարավոր մարդիկ եղել են ոչ թե հանցագործների մի ամբոխ, այլ ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիներ, որոնք օգտվելով Արշակի հրովարտակից, թողել են իրենց բնակավայրը և եկել հավաքվել են Արշակավան։ Նրանց տերերը Արշակից պահանջել են հետ վերադարձնել նրանց, սակայն Արշակավան եկած շինականները հրաժարվել են կատարել ֆեոդալների պահանջը և ապստամբել են։ Սնփական ուժերով ի վիճակի չլինելով ճնշել ապստամբությունը, ֆեոդալները դիմել են Շապուհին, նրանից օգնական ուժ ստացել և արյան մեջ խեղդել ապստամբությունը։ Սոցիալական այս կարևոր շարժումը բարեխղճորեն լուսաբանված է մեծանուն ակադեմիկոսի կողմից։

Ակադ. Մանանդյանը Տրդատ III-ի կապակցությամբ, կանգ է առել Հայաստանում քրիստոնեության տարածման և պաշտոնական հայտարարվելու փաստի վրա։ Նա ցույց է տվել, որ քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան Լուսավորչից շատ առաջ՝ II դարի վերջերին և III դարի սկզբներին։ Հայտնի է, որ III դարի կեսերին քրիստոնեությունը տարածելու համար Հայաստան է եկել հայտնի գնոստիկոս Բարտածանը, իսկ նույն դարի վերջերին արդեն քրիստոնեությունը Հայաստանում այնպիսի լայն տարածում է ունեցել, որ նույնիսկ ստեղծվել է առանձին եպիսկոպոսական թեմ՝ Մերուժանի գլխավորությամբ։

Հեղինակը այս գլխում քննության է առել նաև քրիստոնեության պաշտոնական կրոն հայտարարվելու ժամանակը և եկել է այն եզրակացության, որ այդ եղել է ավելի ուշ, քան մինչև այժմ ընդունված էր կարծել։ Ըստ նրա, քրիստոնեությունը Հայաստանում չէր կարող պաշտոնական կրոն հայտարարվել Միլանի էդիկտից, այսինքն՝ 313 թվականից առաջ, որովհետև Հայաստանը վասալական կախվածության մեջ էր Հռոմից և, կամա թե ակամա, պիտի հետևեր նրա օրինակին։ Այս պնդումը ճիշտ չէ, քանի որ Եվսեբիոս Կեսարացին 324 թվականին գրած իր «Եկեղեցական պատմության» մեջ հայտնում է, որ Մաքսիմիանոս Դայա կայսրը (305—313) կռվել է քրիստոնյա Հայաստանի դեմ։ Ակադեմիկոսի այն պատճառաբանությունը, թե Մաքսիմիանոս Դայայի բանակի դեմ կռվել են Անդրտիգրիսյան Հայաստանի զորքերը, համոզեցուցիչ չէ, քանի որ հռոմեական բանակի դեմ ճակատ առ ճակատ կռվել և հաղթանակել կարող էր միայն Մեծ Հայքի թագավորական կազմակերպված բանակը։ Ինչ վերաբերում է Ղևոնդես Պատրիարքին, որ իբր Լուսավորչին ձեռնադրել է Կեսարիայում, ապա դա ուշ շրջանում ավելացված սովորական ընդմիջարկություն է, որի նպատակն է քրիստոնեության մուտքը հրաշապատումներով գունազարդել։ IV դարի հույն պատմիչ Սոզիմենոսը և հին հայկական բոլոր պատմիչները (Ագաթանգեղոս, Զենոբ Գլակ, Խորենացի և ուրիշներ), որոնց չհավատալու հիմք չունենք, վկայում են, որ Միլանի էդիկտից առաջ Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն էր հայտարարված։

Ակադ. Մանանդյանը մանրամասնորեն կանգ է առել այն պայքարի վրա, որը տեղի է ունեցել Հայաստանում IV դարում արքունիքի և ֆեոդալական կենտրոնախույս ուժերի միջև։ Արքունիքն իր համախոհներով աշխատել է ստեղծել կենտրոնաձիգ ուժեղ պետություն, իսկ կենտրոնախույս ուժերն ամեն կերպ ձգտել են պահպանել հայ քաղաքական միապետականությունը և անկախությունը։ Պարսկա-հռոմեական քաղաքական շրջաններն ամեն կերպ սատարել են կենտրոնախույս ուժերը՝ ցանկանալով քաղաքականապես թուլացնել Հայաստանը, նվաճել այն և դարձնել վասալ երկիր։ Երկու հակադիր ուժերի միջև սկսված այդ պայքարը բուռն թափով ընթացել է ամբողջ IV դարում՝ սկսած Խոսրով Կոտակից մինչև Վռամշապուհ։ Կենտ-

րոնացված հզոր պետություն ստեղծելու համար Հայաստանում տարվող ջանքերը, ինչպես շատ ճիշտ ցույց է տվել հեղինակը, ունեցել է պրոգրեսիվ երևույթ, որովհետև դա ո՛չ միայն «կարգ էր անկարգության մեջ», այլև այդ պայքարը Հայաստանի կոնկրետ պայմաններում նպաստում էր նոա հզորության, առանց որի Հայաստանը չէր կարող պահել իր քաղաքական անկախությունը։ Կենտրոնական պետության համար մղվող պայքարը վերջացավ անհաջողությամբ։ Այդ պետք է բացատրել ոչ թե հայ թագավորների անկարողությամբ, նրանց ոչ հեռատես և սխալ քաղաքականությամբ, ինչպես բացատրել են ոմանք, այլ ստեղծված օբյեկտիվ պատճառներով։ Հայաստանը գտնվելով ֆեոդալական մասնատված տնտեսական պայմաններում, ենթարկված էր նաև քաղաքական մասնատվածության, ուստի և հայկական արքունիքի ջանքերը ստեղծելու միասնական քաղաքական հզոր պետություն, անհաջողության մատնվեցին, Հայաստանն ի վիճակի չգտնվեց պաշտպանվել դրսի հարձակումներից, Հռոմը և Պարսկաստանը համաձայնության եկան և բաժանեցին Հայաստանը իրար մեջ ու վերջ տվին նրա անկախությանը։

Հատորում հանգամանորեն նկարագրված են IV դարի կարևոր իրադարձությունները։ Մենք դիտողություն ունենք միայն մի հարցում։

Խորով Կոտակի ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների նկարագրության բաժնում դուրս է մնացել Դվին քաղաքի հիմնադրության և նրա մայրաքաղաք դառնալու փաստը, որի մասին պետք է խոսվեր։

Ակադ. Մանանդյանի աշխատության լավագույն գլուխներից մեկն է «Ռոմաշապուհը և հայ գրերի գյուտը» գլուխը, որն առաջին անգամ հանդիսանում 1940 թվականին լույս տեսած «Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность» աշխատության։

Քննության ենթարկելով գրի պատմության մասին մեզ հասած աղբյուրները (Կորյուն, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի և ուրիշներ) հավաստի տեղեկությունների հիման վրա ակադ. Մանանդյանը շարադրել է հայ գրի հանճարեղ ստեղծողի՝ Մեսրոպ Մաշտոցի գիտական կենսագրությունը։

Կարևոր է առանձնապես նշել, որ մեծանուն ակադեմիկոսը հայ գրի ստեղծումը չի դիտում որպես միայն կուլտուրական երևույթ, այլ այդ կուլտուրական ձեռնարկի հետևում տեսնում է այն քաղաքական բացառիկ խոշոր հետևանքները, որոնք ճակատագրական դեր խաղացին հայ ժողովրդի գոյության պահպանման գործում։ «Ակներև է սակայն,— գրում է Հ. Մանանդյանը,— որ այդ գյուտն ունեցավ նաև քաղաքական մեծ նշանակություն, որովհետև սեփական հայ գրի ու գրականության ստեղծումը մրցրեց հայությունը հին կուլտուրական ժողովուրդների շարքը և, զարթնեցնելով նրա ազգային ինքնագիտակցությունը՝ արգելք եղավ հայ ժողովրդի ապազգայնացման ու միաձուլման քաղաքականության, որը հինգերորդ և վեցերորդ դարերում մարում էին Հայաստանում Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրությունը» (էջ 246)։

Խոսելով նախամաշտոցյան հայ գրի գոյության մասին, ակադ. Մանանդյանը ժխտում է Մաշտոցից առաջ հայ նշանագրերի գոյությունը, սակայն հնարավոր է համարում, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ փորձեր կատարված լինեն գրելու հայերեն այլ նշանագրերով։ «Սվ միանգամայն հավանական կարելի է համարել,— գրում է նա,— որ քրիստոնեության սկզբից հետո, ինչպես այդ երևում է աղբյուրների որոշ ակնարկներից, կարող էին փորձ արած լինել ստեղծելու հայերեն դպրություն, գլխավորապես, սեմական լեզուների այբուբենի օգնությամբ հարավային Հայաստանում» (էջ 258—259)։

Մաշտոցից առաջ այլ նշանագրերով հայերեն գրելու մասին Մանանդյանի առաջ քաշած այս տեսակետը լիովին ընդունելի է։ Սակայն մեր համեստ կարծիքով, Հայաստանում տեղական նշանագրերով ևս գիր գոյություն է ունեցել հեթանոսական շրջանում։

Ակադ. Մանանդյանը հայ գրի ստեղծման բաժնում խոշոր նշանակություն է տալիս պրոֆ. Ն. Ադոնցի Փոտի արխիվում հայտնաբերած մի տեղեկությանը՝ Թեոդորոս Մոպսուեստացու կողմից Մաշտոցի համար աշխատություն գրելու մասին։ Իրոք, այդ տեղեկությունը շատ արժեքավոր է և անհերքելիորեն ապացուցում է, որ Մաշտոցը մտերմական փոխհարաբերության մեջ է գտնվել Թեոդորոս Մոպսուեստացու հետ։ Այդ փաստը գալիս է հաստատելու նաև հայադիտության մեջ հայտնված այն կարծիքը, որ Մաշտոցն իր կրթությունը ստացել է Միջագետքի բարձրագույն դպրոցում և աշակերտակից հանդիսացել Թեոդորոսի՝ վաղ քրիստոնեական ազանդապետ Արիոսի այս նշանավոր ուսուցչի հետ։ Սակայն այս ամենին հիմք չի տալիս ժամանակագրական հենակ դարձնել Փոտի աշխատությունը՝ հայկական գրի ժամանակը որոշելու խնդրում, ինչպես վարվում է ակադ. Մանանդյանը՝ հայ գրերի ստեղծման թվականը համարելով 391/2—392/3 թվականները։ Հայկական գրի ստեղծման թվականի

մասին ամենից արժանահավատ սկզբնաղբյուրը հանդիսանում է Կորյունի՝ Մաշտոցի աշակերտի հաղորդած տեղեկությունը, որը ավելի մոտիկից է ծանոթ իր ուսուցչի կյանքին և գործունեությանը, բան հազարավոր կիլոմետրեր Հայաստանից հեռու գտնվող և Հայաստանի մասին աղոտ պատկերացում ունեցող հույն կամ լատին պատմիչները։ Հայկական գրերի ստեղծումը տեղի է ունեցել 406 թվականին։

Գրախոսվող հատորի վերջում տեղավորված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը ոստ բաժինների, որը կարևոր օգնություն է հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողներին։ Հատորն ունի նաև ժամանակագրական և անունների ցանկեր։

Դրախոսության ծավալը թույլ չի տալիս կանգ առնել ակադ. Մանանդյանի ներկա հատորում տպագրված բազմաթիվ այլ հարցերի վրա, որոնք գիտական մեծ արժեք ունեն։ Բոլոր դեպքերում, մեծանուն ակադեմիկոսի աշխատությունը կարևոր ներդրում է հայագիտության մեջ։ Շատ ցավալի է, որ հանգուցյալ ակադեմիկոսը չի կարողացել ավարտել ներկա հատորի 2-րդ մասը և ամբողջացնել տարիների իր բրտնաջան ջրպտումների արդյունքը հանդիսացող կոթողական աշխատությունը։

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

С. Г. ШАУМЯН, *Избранные произведения* в двух томах, Госполитиздат, М., 1958, т. I, 558 стр., т. II, 412 стр.

Ս. Գ. ՇԱՀՈՒՄՅԱՆ, *Ընտիր երկեր*, երկու հատորով, Պետքաղհրատ, Մոսկվա, 1958, հատ. I, 558 էջ, հատ. II, 412 էջ։

Այս տարի հոկտեմբերին լրանում է Վ. Ի. Լենինի մերձավոր զինակից, Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ, մարքսիզմի տեսաբան Ս. Գ. Շահումյանի ծննդյան 80-ամյակը։

Պետական քաղաքական հրատարակչության կողմից հրապարակված Ստ. Շահումյանի Ընտիր երկերի երկհատորյակը, որը խնամքով պատրաստել է ՍՄԿՊ ԿԿ կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտը՝ Հայաստանի և Ադրբեջանի ֆիլիալների հետ միասին, խոշոր միջոցառում է ականավոր ռևոլյուցիոների ծննդյան 80-ամյակը նշանավորելու և նրա գրական ժառանգությունը պրոպագանդելու գործում։

Ստ. Շահումյանի անունը սերտորեն կապված է Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների պատմության հետ։

Երկրամասի՝ ազգային ու կրոնական հակասություններով լեցուն բարդ պայմաններում երկար տարիներ հանդիսանալով սոցիալիզմի հազթանակի համար մղվող պայքարի ղեկավարների մեկը, Ստ. Շահումյանը իր աշխատություններում խորը կերպով վերլուծել է այդ պայքարի ամենաբազմազան ու խճճված հարցերը։

Այդ պատճառով էլ ամենայն իրավամբ կարելի է ասել, որ Վ. Ի. Լենինի և Անդրկովկասի ականավոր ռևոլյուցիոն գործիչների աշխատությունների հետ մեկտեղ Ս. Գ. Շահումյանի երկերը հանդիսանում են երկրամասի ռևոլյուցիոն շարժումների ուսումնասիրության բանալին։

Այդ աշխատությունները ունեն գիտական մեծ արժեք, ակտուալ նշանակություն և դրսևորում են Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցությունը մարքսիզմի տեսական գանձարանի հարստացման և պրոլետարիատի դիկտատուրայի համար մղված պայքարի գործին։

Հատկապես հրամայական անհրաժեշտություն էր դարձել Ս. Գ. Շահումյանի երկերի ռուսերեն հրատարակության գործը։

Մինչև այժմ եղած ռուսերեն հրատարակությունների մեջ սույն հրատարակությունը հանդիսանում է ամենալիակատարը և ընդգրկում է Ս. Գ. Շահումյանի 1902—1918 թթ. գրած համարյա բոլոր աշխատությունները, որոնց զգալի մասը տպագրվում է առաջին անգամ։

Հրատարակությունը բաղկացած է երկու հատորից։ Առաջին հատորը ընդգրկում է 1902—1916, երկրորդը՝ 1917—1918 թվականները։

* * *

Ընտիր երկերի առաջին հատորը սկսվում է դեռևս երիտասարդ Ստ. Շահումյանի՝ 1912 թվականին գրած երկու աշխատություններով՝ Զազարոս Աղայանի գործունեության քառասնամյակի առթիվ գրած ճառով և «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստով, որոնք պարզ կերպով ցույց տվեցին, որ հանձին Շահումյանի՝ բանվոր դասակարգի ազատագրության համար մղվող պայքարի ասպարեզ է